Նախագիծ

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թիվ 23/02-003

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ «ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թ.

Հիմք ընդունելով «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կանոնադրության 8.1.4. ենթամասի 30-րդ կետը՝ «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողովը)

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ «Շահերի բախման քաղաքականությունը» կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցվելուց և լիցենզավորվելուց անմիջապես հետո:
3. Հանձնարարել «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ համապատասխան աշխատակցին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո հրապարակել այն «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ պաշտոնական ինտերնետային կայքում:

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ
Ժողովի նախագահ
Ահարոն Լևոնյան

Հավելված
«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ժողովի
10.02.2023թ.-ի թիվ 23/02-003 որոշման

«ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ
ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
Կանոնակարգ

Գլուխ 1: Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ աշխատակիցների միջև, «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ և հաճախորդների, ինչպես նաև տարբեր հաճախորդների միջև առկա և հնարավոր շահերի բախումը կանխարգելելու քաղաքականությունը:
2. Սույն կանոնակարգը հիմնված է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերով սահմանված դրույթների և «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կանոնադրությամբ և այլ կանոններով կամ կանոնակարգերով սահմանված դրույթներ վրա:

Գլուխ 2: Հիմնական հասկացություններ

1. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) **«Ընկերություն»՝** «ՖԻԴՈ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ.
   2) **«շահերի բախում»՝** իրավիճակ, երբ երկու անձանց նպատակները կամ պարտավորությունները հակասում են միմյանց, և որը կարող է կասկածի տակ դնել անձի բարեխղճությունը, օբյեկտիվությունը և անաչառությունը.
   3) **«պատվեր»՝** հաճախորդի կողմից ընկերությանը տրվող գործարքի կատարման հանձնարարական.
   4) **«հաճախորդ»**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով օգտվում է Ընկերության կողմից մատուցվող ծառայություններից՝ Ընկերության հետ կնքված պայմանագրի հիման վրա.
   5) **«պայմանագիր»՝** հաճախորդի և Ընկերության կողմից համաձայնեցված փաստաթուղթ, որը սահմանում է Ընկերության կողմից ծառայությունների մատուցման կարգը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները.
   6) **«Կենտրոնական բանկ»՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.
   7) **«բանկ»՝** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ներդրումային ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկը:

Գլուխ 3: Ընկերության աշխատակիցների միջև շահերի բախումը

1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր քայլերը Ընկերության տարբեր աշխատակիցների միջև շահերի բախումը կանխարգելելու նպատակով:

2. Ընկերության ցանկացած աշխատակից պարտավոր է տիրապետել Ընկերության շահերի բախման քաղաքականությանը, բացահայտել իր պարտականությունները կատարելիս այլ աշխատակիցների հետ շահերի բախման հավանականությունը և հնարավոր իրավիճակները և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները իր և այլ աշխատակիցների միջև շահերի բախում թույլ չտալու համար:
3. Եթե աշխատակիցների ներդրած ջանքերով հնարավոր չի լինում կանխել շահերի բախումը, ապա Ընկերության աշխատակիցների միջև շահերի բախման առաջացման դեպքում աշխատակիցներից յուրաքանչյուրն անմիջապես պետք է տեղեկացնի այդ մասին Ընկերության գործադիր տնօրենին, և միայն վերջինս թույլտվության դեպքում շարունակի դրսևորել տվյալ վարքագիծը:

Գլուխ 4: Ընկերության և հաճախորդների միջև շահերի բախումը

1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր քայլերն Ընկերության և հաճախորդների միջև շահերի բախումը կանխարգելելու նպատակով:
2. Ընկերությունը մինչև հաճախորդի հետ պայմանագրի կնքումը և ծառայությունների մատուցումը՝ հաճախորդին հասանելի է դարձնում սույն կանոնակարգով սահմանված «Շահերի բախման քաղաքականությունը»:
3. Եթե հաճախորդի համար համագործակցող բանկում դրամական միջոցների և արժեթղթերի հաշիվների բացումն ու սպասարկումը, կամ հաճախորդի պատվերների՝ համագործակցող բանկի կամ ներդրումային ընկերության միջոցով կատարումը կարող է հանգեցնել Ընկերության, համագործակցող բանկի կամ ներդրումային ընկերության և հաճախորդի շահերի բախմանը, ապա մինչև պատվերի ընդունումը և գործարքի կնքումն Ընկերությունը ձեռնարկում է շահերի բախումը կանխարգելելուն ուղղված միջոցառումներ:

Գլուխ 5: Ընկերության տարբեր հաճախորդների միջև շահերի բախումը

1. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր հնարավոր քայլերը Ընկերության տարբեր հաճախորդների միջև շահերի բախումը կանխարգելելու նպատակով:
2. Եթե հաճախորդների պատվերների կատարման դեպքում հնարավոր է, որ շահերի բախում առաջանա հաճախորդների միջև, ապա Ընկերությունը մինչ պատվերների ընդունումը շահերի բախման մասին տեղեկացնում է

համապատասխան հաճախորդներին և առաջարկում է շահերի բախումը կանխարգելելուն ուղղված միջոցառումներ:

Գլուխ 6: Պատասխանատու անձինք և նրանց պարտականությունները

1. Սույն կանոնակարգով սահմանված շահերի բախման քաղաքականության պատշաճ ներդրման համար պատասխանատու անձն Ընկերության գործադիր տնօրենն է, ով պարտավոր է.
   1) շահերի բախման քաղաքականությունը ներկայացնել ժողովի հաստատմանը,
   2) ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը շահերի բախման իրավիճակների առաջացումը կանխելու, շահերի բախման բացասական հետևանքները կանխարգելելու համար,
   3) Ընկերության անձնակազմին իրազեկել շահերի բախման քաղաքականության, համապատասխան ուղեցույցների և ընթացակարգերի (առկայության դեպքում), նրանց պարտականությունների, ինչպես նաև շահերի բախման ռիսկերը չկառավարելու դեպքում հաճախորդների, ինչպես նաև Ընկերության համբավի վրա ազդող բացասական հետևանքների մասին:
2. Ընկերության բոլոր աշխատակիցները պարտավոր են տեղեկացված լինել սույն կանոնակարգով սահմանված շահերի բախման քաղաքականության, համապատասխան ուղեցույցների և ընթացակարգերի և իրենց պարտականությունների մասին, ներդնել բոլոր ջանքերը իրենց պատասխանատվության տակ գտնվող գործունեության ընթացքում հնարավոր շահերի բախումը սահմանափակելու նպատակով:
3. Անհրաժեշտության դեպքում ընկերությունը Բոլոր աշխատակիցներից կարող է պահանջել տեղեկատվություն շահերի բախումը կանխելու համար:

Գլուխ 7: Այլ դրույթներ

1. Սույն կանոնակարգում փոփոխությունները կամ լրացումները հաստատվում են Ընկերության ժողովի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատվելուց անմիջապես հետո: Ընդ որում, փոփոխությունների և լրացումների վերաբերյալ առաջարկ կարող է ներկայացնել Ընկերության գործադիր տնօրենը: